## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0062-Ա

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 32-Ա և 14 նոյեմբերի 2023 թվականի «Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 08-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 129-Լ որոշումներով, հաշվի առնելով բնակչի դիմումը, Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 18 հունվարի 2024 թվականի թիվ 2 նիստի եզրակացությունը, ***որոշում եմ.***

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի մաս 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729-ով նախատեսված գումարից Գերասիմ Արամի Ղազարյանի սոցիալապես անապահով ընտանիքին հատկացնել սոցիալական աջակցություն՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

18 հունվարի 2024
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0063-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-070-0065-0024 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 8-րդ փողոց, 16 բնակելի տուն փոստային հասցե:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

18 հունվարի 2024
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0064-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-070-0107-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 13-րդ փողոց, 14 բնակելի տուն փոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

18 հունվարի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0065-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի 21.11.2023թ. թիվ 117 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի ավագանու 27.12.2023թ N 149-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-019-0101-0027 կադաստրային ծածկագրով 8,74002 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը Արջուտի ոսկու հանքավայրի գործարանի ենթակառուցվածքների շինարարության և սանիտարապաշտպանիչ գոտու ստեղծման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:

2.Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, 06-019-0101-0027 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության,արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Արջուտ, 3 հողամաս փոստային հասցե:

3. Սույն որոշման 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4 . Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0066-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի 21.11.2023թ. թիվ 117 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի ավագանու 27.12.2023թ N 149-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-019-0101-0025 կադաստրային ծածկագրով 4,415282 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը, Արջուտի ոսկու հանքավայրի գործարանի ենթակառուցվածքների շինարարության և սանիտարապաշտպանիչ գոտու ստեղծման նպատակով, փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:

2.Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, 06-019-0101-0025 կադաստրային ծածկագրով 4,415282 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության,արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել Լոռու մարզ Փամբակ համայնք, գյուղ Արջուտ, 5 հողամաս փոստային հասցե:

3. Սույն որոշման 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0067-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի 21.11.2023թ. թիվ 117 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի ավագանու 27.12.2023թ N 149-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-019-0101-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,186189 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը Արջուտի ոսկու հանքավայրի գործարանի ենթակառուցվածքների շինարարության և սանիտարապաշտպանիչ գոտու ստեղծման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:

2.Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, 06-019-0101-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,186189 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության,արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Արջուտ, 7 հողամաս փոստային հասցե:

3. Սույն որոշման 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024, գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0068-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Յուրիկ Ավետիքի Քոչարյանի /ծնված՝ 18/11/1957թ/ դիմումը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N 02 որոշումից տրված քաղվածքը, «Գուգարաց աշխարհ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2024HXYRZF (19.01.2024.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը, այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0085-0006 կադաստրային ծածկագրով 0,27376 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2. Վերականգնել և օրենքի ուժով Յուրիկ Ավետիքի Քոչարյանի (ծնված՝ 18/11/1957թ) սեփականության իրավունքը 06-070-0085-0006 կադաստրային ծածկագրով 0,27376 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության նկատմամբ:
3. Հողամասում առկա է 120ք/մ մակերեսով ինքնակամ կիսակառույց:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0069-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի բ), գ), դ) կետերով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 11 հունվարի 2024 թվականի թիվ 11-Ա որոշման, ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում 2024թ-ի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման, աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների պլանավորման նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փաբակ համայնքի տարածքում 2024 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման, աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. 1) Համայնքի 2024 թվականի բյուջեում նախատեսել գումարներ՝ աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար և անմիջապես տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2) Յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 05-ը ներկայացնել տեղեկատվություն՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ:

3) Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

4) Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առաջարկություններ 2024 թվականի հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից Փամբակ համայնքի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Գարեգին Ասրյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի
ղեկավարի 2024թ. հունվարի 19-ի
թիվ 0069-Ա որոշման

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

| *Հ/Հ* | *Միջոցառումների անվանումները* | *Կատարող* | *Կատարման ժամկետը* |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | **1. Կանխարգելիչ միջոցառումներ** | | |
| 1. | Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն | Համայնքի ղեկավար | Մինչև 15.03.2024թ. |
| 2. | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար: | | |
| 3. | Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները: | | Մինչև 15.03.2024թ. |
| 4. | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար: | | Մշտական |
| 5. | Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքի ղեկավար | Մինչև 15.03.2024թ. |
| | **2. Հիմնական միջոցառումներ** | | |
| 6. | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքի ղեկավար | Մշտապես |
| 7. | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար: | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 8. | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը: | Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 9. | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքի ղեկավար | Ըստ անհրաժեշտության |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների: | Համայնքի ղեկավար | Անհրաժեշ-տության դեպքում |

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի
ղեկավարի 2024թ. հունվարի 19-ի
թիվ 0069-Ա որոշման

**Տեղեկատվություն**

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեով ու այլ ծրագրերով տարվա ընթացքում պլանավորված կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ

| ՀՀ ը/կ | Մարզի, համայնքի (բնակավայրի) անվանումը | Միջոցառման անվանումը | Անցկացման ժամկետը | Ֆինանսավոր-ման աղբյուրը | Գումարի չափը (հազ. դրամ) | Պատասխանատու, կատարող (անուն, ազգանուն, հեռախոսահամար) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Ձորագետ, Վահագնաձոր, Վահագնի, Մարգահովիտ, Լեռնաջուր, Ձորագյուղ | Հեղեղատարների մաքրում | Մինչև 15.03.2024թ | Նախատեսված չէ | | Գարեգին Ասրյան 098 447-166 | |
| 2 | Վահագնաձոր, Բազում | Գետերի հունի մաքրման աշխատանքներ | Մինչև 15.03.2024թ | Նախատեսված չէ | | Գարեգին Ասրյան 098 447-166 | |
| 3 | Փամբակ համայնք | Արագ արձագանքման փրկարար խմբերի անձնակազմի,տեխնիկայի և սարքավորումների ճշտումներ | Մինչև 15.03.2024թ | Նախատեսված չէ | | Գարեգին Ասրյան 098 447-166 | |
| 4 | Փամբակ համայնք | Վտանգավոր տարածքում գտնվող բնակչության | Մշտապես | Նախատեսված չէ | | Գարեգին Ասրյան 098 447-166 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | իրազեկում՝ վտանգների ժամանակ | | | | | |
| 5 | Փամբակ համայնք | Արագ արձագանքման խմբերի ճշգրտումներ | Անհրաժեշտության դեպքում | Նախատեսված չէ | | Գարեգին Ասրյան 098 447-16 | |
| 6 | Փամբակ համայնք | Վտանգների դեպքում մարդկան, կենդանիների և նյութական արժեքների տեղափոխում | Անհրաժեշտության դեպքում | Նախատեսված չէ | | Գարեգին Ասրյան 098 447-16 | |
| 7 | Փամբակ համայնք | Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ | Անհրաժեշտության դեպքում | Նախատեսված չէ | | Գարեգին Ասրյան 098 447-16 | |
| 8 | Փամբակ համայնք | Աշխատունակ քաղաքացիների ընդգրկումը աղետներից առաջացած վթարների վերականգնողական աշխատանքներ | Անհրաժեշտության դեպքում | Նախատեսված չէ | | Գարեգին Ասրյան 098 447-16 | |

ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված 3.
ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի
ղեկավարի 2024թ. հունվարի 19-ի
թիվ 0069-Ա որոշման

# Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ

Փամբակ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մասին

| | |
|---|---|
| 1. Վտանգի (աղետի) անվա-նումը(ները)<br>- սելավ<br>- հեղեղում<br>- սողանք<br>- քարաթափում<br>- և այլն | Ձորագետ, Վահագնաձոր, Եղեգնուտ, Բազում, Վահագնի, Դեբետ, Մարգահովիտ, Լեռնապատ, Անտառամուտ, Ձորագյուղ |
| 2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը) | Ձորագետ բնակավայր <<Ծաթեր>> կոչվող հանդամասից 1000 մ հյուսիս-արևելք, Վահագնի գյուղամիջյան ճանապարհների ձորակներ,Մարգահովիտ բնակավայրի <<Խաչի ձոր>> կոչվող տեղամաս,Լեռնապատ գյուղի Հին գյուղի գյուղամիջյան ճանապարհ |
| 3. Առաջացման հնարավոր պատճառները | Տարերային բնական երևույթների պատճառ |
| 4. 1Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը:<br><br><br><br><br><br><br><br><br><br><br>4.2Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը | 1.Ձորագետ- Ծաթեր կոչվող հանդամաս,<br>Վահագնաձոր-1-ին, 2-րդ և 4-րդ փողոցներ<br>Եղեգնուտ- 5-րդ փողոց<br>Վահագնի-բնակավայրի ճանապարհներ և ձորակներ<br>Դեբետ- ճանապարհների ջրահեռացման համակարգ<br>Մարգահովիտ- բնակավայրի կամուրջներ և ջրատարներ<br>Լեռնապատ-բնակավայրի ճանապարհ և սելավատարներ<br>Անտառամուտ-ճանապարհ և գետակ<br>Ձորագյուղ-բնակելի տների և անասնագոմերի մոտ սելավատարի պատնեշներ<br>2.Ձորագետ 2 բնակելի շենք,1 սեփական տուն, դպրոցի շենքը -82 բնակիչ<br>11 սեփական տուն -25 բնակիչ<br>Վահագնաձոր 14 տուն -40 բնակիչ<br>Եղեգնուտ 4 բնակելի տուն -16 բնակիչ<br>Բազում- 16 առանձնատուն բնակիչ 59<br>Վահագնի 41 շինություն- 89 բնակիչ |

| | |
|---|---|
| 5. Կանխարգելիչ միջոցառումներն իրականացնելու համար առաջարկություններ | Չորագետ- ճաղավանդակների տեղադրում<br>Վահագնաձոր-ափապատնեշների կառուցում<br>Եղեգնուտ- ափապատնեշների կառուցում<br>Բազում-գետի հուների մաքրում և հակահրդեհային համակարգի կառուցում<br>Դեբետ-ջրահեռացման համակարգի կառուցում<br>Մարգահովիտ- սելավատարների մաքրում<br>Լեռնապատ-գետի հունի և սելավատարների մաքրում և հողապատնեշների բարձրացում նոր սելավատարների կառուցում<br>Չորագյուղ- սելավատարների կառուցում |
| 6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2023թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը՝ ըստ միջոցառումների տեսակների | Նախատեսված չէ |

ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ      Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված 4.
ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի
ղեկավարի 2024թ. հունվարի 19-ի
թիվ 0069-Ա որոշման

2024թ. հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից
Փամբակ համայնքի տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու
նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ

| Հ/Հ | Համայնքի (բնակավայրի) անվանումը | Աշխատանքների կատարման օբյեկտը | Անհրաժեշտ աշխատանքները և ծավալները | Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Ձորագետ բնակավայր | Հեղեղատար | ,,Ծաթեր,, կոչվող հանդամասից մոտ 1000մ հյուսիս-ալևելք և ,,Ձորագյուղ,, կոչվող հանդամասից մոտ 700մ հյուսիս-արևելք հեղեղատարերի հուների մաքրում և ճաղավանդակների տեղադրում,վերանորոգում և նորերի կառուցում | Ճաղավանդակները տեղադրված չեն, նշված տարածքները գտնվում են վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման և վերականգնման աշխատանքներ: |
| 2. | Վահագնաձոր բնակավայր | Բնակավայրով անցնող գետ, հեղեղատարեր, սելավատարեր | Բնակավայրի 1-ին, 2-րդ և 4-րդ փողոցներում գետի, հեղեղատարերի և սելավատարերի հուների մաքրում, ափապատնեշների կառուցում | Ափապատնեշները կառուցված չեն, նշված հատվածները գտնվում են վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման և վերականգնողական աշխատանքներ: |
| 3. | Եղեգնուտ բնակավայր | Բնակավայրի ջրառատ առու | 5-րդ փողոցում ջրատար առվի ափապանեշի կառուցում | Ափապատնեշը կառուցված չէ, գտնվում է վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման աշխատանքներ |
| 4. | Բազում բնակավայր | Թվով 13 բնակելի տուն և ցանքատարածություններ | Գետի հունի մաքրման աշխատանքներ | - |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5. | Վահագնի բնակավայր | սելավատարեր | Բնակավայրի ճանապարհների մոտ և ձորակներում սելավատարերի հուների մաքրում, նորերի կառուցում, սելավատարի հենապատերի կառուցում | Նշված հատվածները գտնվում են վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման և վերականգնողական աշխատանքներ |
| 6. | Դեբետ բնակավայր | Ջրահեռացման համակարգ | Բնակավայրի ներհամայնքային ճանապարհների 4 ջրահեռացման համակարգի կառուցում | Նշված 4 ջրահեռացման համակարգից 2-ի աշխատանքները ներկայումս կիսատ են: Նշված հատվածները գտնվում են վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման և վերականգնողական աշխատանքներ: |
| 7. | Մարգահովիտ բնակավայր | Սելավատարեր, ջրատարեր | Բնակավայրի փողոցներում և կամուրջների մոտ սելավատարերի հուների մաքրում և ջրատարերի կառուցում | Նշված սելավատարերից 2-ը մաքրված են, մյուսները գտնվում են ամխիթար վիճակում: Նշված հատվածները գտնվում են վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման և վերականգնողական աշխատանքներ: |
| 8. | Լեռնապատ բնակավայր | Լեռնաջուր գետ, սելավատարեր | Հին բնակավայրի ճանապարհների և Լեռնաջուր գետի հարակից տարածքներում սելավատարերի հուների մաքրում և ջրահեռացման համակարգի կառուցում, հողապատնեշների բարձրացում և պատվարների կառուցում | Մնում է նույն վիճակում: Նշված հատվածները գտնվում են վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման և վերականգնողական աշխատանքներ |
| 9. | Անտառամուտ բնակավայր | Գետակ | Ճանապարհի մոտ ձորակով հոսող գետի հունի մաքրում | Նշվածը չի խանգարում: Նշված հատվածները գտնվում են վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման և վերականգնողական աշխատանքներ |
| 10. | Ձորագյուղ բնակավայր | Սելավատար | Բնակելի տների և անասնագոմերի մոտ սելավատարի պատնեշի կառուցում | Սելավատարերը կառուցված չեն: Նշված հատվածները գտնվում են վերահսկողության տակ, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն մաքրման և վերականգնողական աշխատանքներ |

ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0070-Ա

## ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Սամվել Գալուստի Բեկչյանի /ծնված՝ 03/03/1956թ/ դիմումը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N 02 որոշումից տրված քաղվածքը, «Գուգարաց աշխարհ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Փամբակ համյանքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0291-0004 կադաստրային ծածկագրից 0,15048 հա գյուղատնտեսական նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով Սամվել Գալուստի Բեկչյանի /ծնված՝ 03/03/1956թ/ սեփականության իրավունքը 06-070-0291-0004 կադաստրային ծածկագրից 0,15048 հա գյուղատնտեսական նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0071-Ա

## ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Սուրեն Նորիկի Ղումաշյանի /ծնված՝ 03/08/1958թ/ դիմումը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N 02 որոշումից տրված քաղվածքը, «Գուգարաց աշխարհ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0329-0004 կադաստրային ծածկագրից 0,177517 հա գյուղատնտեսական նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2. Վերականգնել և օրենքի ուժով Սուրեն Նորիկի Ղումաշյանի /ծնված՝ 03/08/1958թ/ սեփականության իրավունքը 06-070-0329-0004 կադաստրային ծածկագրով 0,177517 հա գյուղատնտեսական նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0072-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 29092023-06-0058 վկայականը, <<Գուգարաց Աշխարհ>> ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագծերը, ***որոշում եմ.***

1. Տարանջատել Փամբակ համայնք, գյուղ Լեռնաջուր, 6-րդ փողոց, 24/3 հողամաս հասցեում գտնվող 06-059-0042-0070 կադաստրային ծածկագրով 0,42647 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ համաձայն <<Գուգարաց աշխարհ>> ԱՁ-ի կողմից տրված տարանջատման հատակագծերի:

2. Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Լեռնաջուր, 6-րդ փողոց, 24/3 հողամաս հասցեում գտնվող տարանջատված գույքերին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0,218104 հա մակերեսով հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Լեռնաջուր, 6-րդ փողոց, 24/3 հողամաս փոստային հասցե:

բ) 0,208370 հա մակերեսով հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Լեռնաջուր, 6-րդ փողոց, 24/3 հողամաս փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0073-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-103-0070-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, 1-ին փողոց, 60/4 հողամաս փոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0074-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքի Ձորագետ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-065-0001-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, Ձորագետ, 1-ին փողոց, 121/2 հողամաս փոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0075-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքի Ձորագետ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-065-0001-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, Ձորագետ, 1-ին փողոց, 121/3 հողամասփոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

19 հունվարի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0076-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 23 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 01 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքում 23 դեկտեմբերի 2023 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Սուսաննա Վիգենի Ոսկանյանին վարձակալությամբ 25 տարի ժամկետով տրամադրել լոտ 01. 06-070-0247-0014 ծածկագրով 0,08003 հա, գյուղատնտեսական խոտհարք, մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 10500 ՀՀ դրամով:

2. Սուսաննա Վիգենի Ոսկանյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Սուսաննա Վիգենի Ոսկանյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 հունվարի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0077-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 23 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 02 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 23 դեկտեմբերի 2023 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Լացես Նիկոլայի Գոկչյանին վարձակալությամբ 25 տարի ժամկետով տրամադրել լոտ 02. 06-070-0350-0143 ծածկագրով 0,4928 հա գյուղատնտեսական խոտհարք, մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 4200 ՀՀ դրամով:

2. Լացես Նիկոլայի Գոկչյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Լացես Նիկոլայի Գոկչյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 հունվարի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0078-Ա

06-103-0062-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով հողամասի սեփականատեր Արմենակ Պետրոսի Քոչինյանի դիմումը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև սեփականության վկայականը՝ N 12052023-06-0028՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի Փամբակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արմենակ Պետրոսի Քոչինյանի սեփականություն հանդիսացող 06-103-0062-0006 կադաստրային ծածկագրով 0,23006 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը տարանջատել երկու գույքային միավորների՝ 0,1593 հա մակերեսով հողամասի և 0,07076 հա մակերեսով հողամասի՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծերի:
2. 06-103-0062-0006 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,1593 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլարտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, Վանաձոր-Ալավերդի մայրուղի, 24-26կմ 12/1 հողամաս փոստային հասցե:
3. 06-103-0062-0006 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,07076 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, Վանաձոր-Ալավերդի մայրուղի, 24-26կմ 12/2 հողամաս փոստային հասցե:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 հունվարի 2024, գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0079-Ա

ՄԱՐԱՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի 15.06.2023թ. N-53 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի ավագանու 13.07.2023թ N 78-Ա որոշումը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի Դեբետ գյուղի վարչական սահմաններում գտնվող, Մարատ Մանուչարյանի սեփականություն հանդիսացող 06-034-0101-0021 ծածկագրով 0.258996 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հանդիսացող հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության պահին առկա կադաստրային արժեքի տարբերության համար հողամասի սեփականատեր Մարատ Մանուչարյանին պարտավորեցնել համայնքի բյուջե վճարել 330000 դրամ (երեք հարյուր երեսուն հազար դրամ):

3.Փամբակ համայնքի Դեբեդ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-034-0101-0021 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 1-ին փողոց, 38/1 հողամաս փոստային հասցե:

4. Սույն որոշման 3-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

5.Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 հունվարի 2024, գ. Փամբակ